Պարույր Սևակ

Ատում եմ

Ատում եմ ձյունը՝
Թե նա տեղում է ամառվա կեսին,
Եվ մահն եմ ատում՝
Թե հյուր է գալիս աղջկատեսին,
Մահից ոչ պակաս՝
Եվ ա՛յն քողարկված մենատընտեսին,-
Նրա՛ն ու նրա՞նց,
Ովքեր ուրիշի շեն տունն են քանդում՝
Իրենց պետք եկած գերանի համար,
Ովքեր ուրիշի ծառերն են ջարդում՝
Մի բուռ չհասած ծիրանի համար,
Ովքեր համայնքի ծովից են խոսում,
Բայց դեպի իրենց լճակն են հոսում...
Ատում եմ նաև այն խելոք սուսիկ - փուսիկությունը,
Որտեղ դժվար է տարբերել անգամ երեսն աստառից,
Եվ այն հարկադի՛ր, ոչ թե ի ծնե կուզիկությունը,
Որ ստացվում է... ցած առաստաղից:
Ատում եմ նաև այն նեղ կոշիկը,
Որ աքցանի պես ոտքերդ է բռնում,
Իսկ հոգուդ վրա կոշտուկ է դառնում...
Ա՛յն գործն եմ ատում,

Որ ոչ թե գործ է, այլ ծանրը հանցանք,
Ա՛յն փորձն եմ ատում,
Որ մարդկանց գլխին դառնում է փորձանք,
Ա՛յն դավանանքը,
Որ վերջ ի վերջո փոխվում է դավի,
Գլխացավանքը,
Որ փոխարկվում է սուր գլխացավի...
Խավարն եմ ատում, եթե խավարում
Ո՛չ միտք է ծնվում և ո՛չ էլ զավակ:
Եվ լույսն եմ ատում, թեկուզև պայծառ,
Թե չի հանդուրժում մինչև իսկ շվաք...
Ի՞նչ խոսքեր ասեմ այն ձեռագրրին,
Որ չի հասկացվում, բայց կարդացվում է:
Ատե՞մ, թե խղճամ այն տարեգրրին,
Որ նյութ է սարքում,
Ոչ թե հավաքում:
Խղճա՞մ, թե ատեմ այն տարագրրին,
Որ միշտ ապրում է... իր հայրենիքում...
Թո՛ւհ, ինչքա՛ն բան կա կյանքում ատելի,-
Ես չգիտեի...

25-26.V.1957թ.
Մոսկվա